

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Կիր. 1 Դեկտ. 1996.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Գշ. 3 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Դշ. 4 Դեկտ.- Ընծայումն Ս. Աստուածածնի: Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժեքով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաւար, հանդիսապետ Սրբազան օրուան Ս. Պատարագը մատուցեց Տիրամօր Ս. Գեքեզմանին վրայ:

- Բարեբրար Կիւլապի Կիւլպենկեանի եւ իր գերդաստանի ննջեցեցոց հոգիներուն համար կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Հանդիսապետն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան:

Շր. 7 Դեկտ.- Սրբոցն Գրիգորի Սքանչեղագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բաբախանեան:

Կիր. 8 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ խորանի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Սահակ Արդ. Մաշայեան:

Ուր. 13 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան:

Շր. 14 Դեկտ.- Առաքելոցն Թաղէտի եւ Բաբրդոյիմէտի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Արաջանեան:

Կիր. 15 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերապետեան:

Շր. 21 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան:

Կիր. 22 Դեկտ.- Յղութիւն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժեքով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաւար, ուր Տիրամօր Ս. Գեքեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազանը, եւ տուաւ Ս. Տաւարին պատմականը:

Ուր. 27 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 28 Դեկտ.- Ս. Յակոբայ Մծքնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան: Վերաբերումը կատարուեցաւ Սուրբին նկարով կառուցուած շարժական Սեղանին վրայէն:

Կիր. 29 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Շր. 4 Յունուար 1997.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր. ժամարարն էր Տ. Թեոդորոս Արդ. Ջաֆարեան:

Կիր. 5 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Ժամարարն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան:

- Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաւարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս. Արքող. «Օրհնեցէ՛ գՏէր» շարականի երգեցողութեամբ քափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

Բշ. 6 Յուն.- Ս. Դաւիթ Մարգարէին եւ Յակովբայ Տեառնեղոր (Տօն Առաքելական Ս. Արքողոյս Ս. Երուսաղէմի):

- Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջաւ եւ եմփօրոն զգեցած բարձրացաւ Տեառնեղոր Արքողի պատուանդանին, ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտիլը եւ ընդունեց Միաբանութեան եւ զպիւրեկներուն շնորհաւորութիւնները:

Լուրարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեան «Քրիստոս Աստուած մեր» մաղրանքի ընթացքին մասնաւոր քարեմաղորութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան երկար քարօր կենաց համար եւ ապա մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ եւ քարոզեց:

«Հայր Մեր»էն առաջ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ս. Արքողոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտամունքին:

- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաւարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Տ. Էմմանուէլ Արդ. Արաջանեան եւ Տ. Թեոդորոս Արդ. Ջաֆարեան:

Գշ. 7 Յուն.- Սրբոցն Ստեփանոսի Նախասարկաւազին եւ Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Արքողոյս

բարեշնորհ Սարկազները թիւով 9, առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներուն, մարգարտագարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռնին, կատարեցին «Սարկազաց Հանդէսը»: Արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

– Ժառանգաւորաց Վարժարանի նաշարահին մէջ տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք՝ Սարկազաց Տոնին առթիւ: Խօսք առին, Տրց. Կարէն Բարսեղեան, որ հրաւիրեց Սարկազապետներէն Տ. Էմմանուէլ Արդ. Աթաքանեանին, եւ ապա Տրց. Հայկ Գազազեանին. սարկազները միաբերան երգեցին «Նախասարկազ» շարականը: Ուսուցչական կազմին կողմէ խօսեցաւ Պրն. Հրաչիկ Միրզոյեան: Խօսք առաւ էջմիածնէն Ս. Գայիանէ վանքին ֆահանայ Տ. Յարութիւն Դարբինեանը, որ երուսաղէմ ուխտի եկած է երեցկնոջ հետ:

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը ըրաւ իր փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ «Պահպանիչ»ով:

Դշ. 8 Յուն.– Գլխաւոր Առաքելոյ նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Եշ. 9 Յուն.– Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատուց Տ. Դանիէլ Քիւնյ. Գարանեան:

Ուր. 10 Յուն.– Ս. Յակոբայ Մայր Տաճարին գաւիթէն կատարուած «Հրաշափառ»ի արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

– Ժամերգութենէն եւ նախատեսակէն ետք Միաբանութիւնը «Որ էն յեւրեան» Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

Շր. 11 Յուն.– Տօն Սրբոց Որդոցն Որոտման: Մայր Տաճարի Ս. Գլխաղրի մատրան մէջ օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց եւ ֆարօգեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ապասարկող վարդապետներն էին Տ. Աւետիս Արդ. Իփրանեան եւ Տ. Բագրատ Արդ. Պուրեմեան: Իսկ բուրվառակիր վարդապետներն էին Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան եւ Տ. Էմմանուէլ Արդ. Աթաքանեան:

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը ամպիոպանի տակ, Ս. Խաչափայտի մասունք ի ձեռնին, նախագահեց եռադարձ մեծահանդէս բափօրին:

Թափօրէն վերջ Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Որ էն յեւրեան» Ս. Աթոռոյ շարականի

երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը օրհնուած նշխար թաժնեց բոլորին փակելով շարքը Աւագ Տօներուն:

Կիր. 12 Յուն.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Բշ. 13 Յուն.– Իրիկնադէմին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ եղան ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցած «Կաղանդ»ի հանդէսին:

– Հանդէսէն ետք Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը միասին ընթրեցին Պարտիզաբաղի սեղանատան մէջ:

Դշ. 14 Յուն.– Կաղանդ, Նոր Տարի, ըստ Հին Տոմարի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարօգեց Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոյգանեան:

Պատարագէն ետք բոլորը բարձրացան Պատրիարքարանի դահլիճը երգելով Ս. Աթոռոյ Մաղերբերը:

– Նորին Ամենապատուութիւնը ըրաւ իր պատշաճ խօսքը, մտիկ ընելէ յետոյ Վարժարանի մանուկներէն Մակի Յովհաննէսեանի յստակ առողջանութեամբ կարդացած բարի մաղբանքները, եւ ներկաներուն թաժնեց նարինջ:

– Նոյն առաւօտուն Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաքանեան: Պատարագէն ետք եղան Պատրիարքարան:

Շր. 18 Յուն.– Զրազալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 10ին Պատրիարք Սրբազան Զօր գլխաւորութեամբ ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ եղան դէպի Բեթղեհէմ:

Ճամբու կիսուն Յունաց Ս. Նղիա վանքին առջեւ դիմաւորութեան եկած էին մուխթարներ եւ ֆաղաֆապետարանի ներկայացուցիչներ:

Ինքնաշարժերու թափօրը հասաւ Ռաֆէլի գերեզմանը, որմէ ետք թափօրը մտաւ Պաղեստինեան թաժին եւ հայ Սկաուտական նուագախումբերու առաջնորդութեամբ դէպի Ս. Ծննդեան հրապարակը, ուր Պատրիարք Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ ընդհանուր ոստիկանապետէն, կառավարիչէն, ֆաղաֆապետէն եւ ներկայացուցիչներէն, կազմուեցաւ թափօր, միաբանութեան անդամներով եւ ժառանգաւոր սաներով:

«Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը բարձրացաւ Ս. Ծննդեան Տաճարի Հայկական Վանքը:

Տեսչարանին մէջ բարի գալուստի խօսքներն եւ Պատրիարք Սրբազան Հօր խաղաղութեան եւ բարօրութեան մաղթանքներն յետոյ տեղի ունեցաւ պատուասիրութիւն:

- Յետ միջօրէի ժամը 2ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճարը եւ Ս. Այրը:

Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ կը մատուցանէ Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան:

Ապա բոլոր Միաբանութիւնը կը բարձրանայ Հայոց Վանք, ուր բակին մէջ կը կարդացուի Ս. Ծննդեան Աւետարանը եւ կ'երգուի «Փառք ի Բարձունս»:

- Գիշերուան ժամը 7.30ին վանքի հիւրարարահին մէջ, տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:

Գիշերուան ժամը 10ին կը վերսկսին արարողութիւնները: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 19 Յուն.- Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն: Կեա գիշերին, ամբողջ միաբանութիւնը կ'իջնէ Ս. Ծննդեան Այրը, ուր կը շարունակուին արարողութիւնները:

Պատրիարք Սրբազան Հայրը կու տայ իր պատգամը Հայերէն եւ Անգլերէն լեզուներով: Նոր Պաղեստինեան կառավարութեան ներկայացուցիչները որոնք ներկայ էին Ս. Այրին մէջ կատարուած արարողութեան, կը շնորհաւորեն Պատրիարք Սրբազան Հայրը եւ կը մեկնին: Պատրիարք Սրբազան Հայրը կը վերադառնայ Երուսաղէմ:

- Աւագ Սեղանին վրայ կը պատարագէ եւ կը քարոզէ Տ. Յարութիւն Բեկն. Դարբինեան: «Ջրօրհնէ՛ք»ի արարողութեան կը նախագահէ եւ կը քարոզէ Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեան, որ Պոլսէն հաւատացեալներու խումբի մը ի գլուխ, Երուսաղէմ եկած են ուխտի:

- Ս. Ծննդեան Այրին մէջ կը պատարագէ Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Բոլոր Միաբանութիւնը կը բարձրանայ Հայոց Տեսչարան, ուր բակին մէջ կը կարդացուի Ս. Ծննդեան Աւետարանը եւ կ'երգուի «Փառք ի Բարձունս» եւ Միաբանութիւնը կը վերադառնայ Ս. Արտո:

- Իսկ Երուսաղէմի մէջ, Ճրագալոյցի արարողութեան, Ս. Յարութեան Տաճարին մէջ՝ Ս. Գեորգեանին վրայ, նախատեսակին կը նախագահէ Տաճարին տեսուչը՝ Տ. Վաղարշ Եպս. Խաչատուրեան: Ս. Գեորգեանին վրայ կը պատարագէ Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Արարողութիւնը կ'աւարտի Տաճարի մեր Տեսչարանին մէջ Ս. Ծննդեան Աւետարանի ընթերցումով եւ «Փառք ի Բարձունս»ի երգեցողութեամբ:

- Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ յաջորդ առաւօտ կը պատարագէ Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան: «Ջրօրհնէ՛ք»ի արարողութեան կը նախագահէ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

- Կեսօրէ ետք ի Ս. Յակոբ պաշտուած նախատեսակին Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 20 Յուն.- Յիշատակ Մեռելոց: Ըստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարգման Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Իսկ Հոգեհանգստեան կարգին հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 25 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին ձախակողմեան դասուն Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

- Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 26 Յուն.- Տօն Անուանակոչութեան Տեառն: Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Գրիստոսի Ս. Գեորգեանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Յուսէկ Եպս. Պաղտասեան: Դեպի վանք դարձին, հայոց քաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը, ուր Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց «Տնօրհնէ՛ք»ի արարողութեան, որ կրկնուեցաւ վանքի սեղանատուններուն մէջ:

- Նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 27 Յուն.- Տօն Ծննդեան Ս. Յովնանու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Արաքանեան:

Շր. 1 Փետր.- Արքեպիսկոպոսի քաղաքին եւ Եօթն մանկանց Եփեսոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլսաղիր. Ժամարարն էր Տ. Յարութիւն Բեկն. Դարբինեան:

Կիր. 2 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասուն մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Սահակ Արդ. Մաշայեան:

Շր. 8 Փետր.- Արքեպիսկոպոսի քաղաքին եւ Կիւրդի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլսաղիր: Ժամարարն էր Տ. Զաֆարիա Բեկն. Սարիբէկեան:

Կիր. 9 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերամատարան մէջ:

Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

Շր. 15 Փետր.- Սրբոյն Գրիգորի Աստուծաժառանգին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Կիր. 16 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Ուր. 21 Փետր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 22 Փետր.- Ս. Սարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Ըստ սովորութեան կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, հանգուցեալ ազգային բարերար Գալուստ Պէլ Կիւլպէնկեանի, եւ իր ծնողաց Սարգսի եւ Տիրուհոյ, եւ գերդաստանի ննջեցելոց հոգիներուն համար: Հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 23 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան:

Դշ. 26 Փետր.- Տեառներնդ առաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

- Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցե՛ք» ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան:

Եշ. 27 Փետր.- Տեառներնդ առաջ: Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ ֆարօգեց Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան:

Շր. 1 Մարտ.- Իսահակայ Պարբեւի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 2 Մարտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Տ. Շնորհի Ծ. Վրդ. Գասպարեան:

Դշ. , Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 6 Մարտ.- Ս. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 վկայիցն (Յիշատակ Մեռելոց եւ Տօն Ազգային):

- Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ ֆարօգեց Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղաճեան:

Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղրանք»ին:

Ուր. 7 Մարտ.- Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Աւետարանիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, որ նաեւ ֆարօգեց: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան: Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորոց կողմէն:

Շր. 8 Մարտ.- Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Սահակ Արդ. Մաշայեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարի խորաններուն զլիսաւոր սրբանկարները, Համբարձի շարականը երգուելու ժամանակ, վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերշնորհի եւ հոգեշնորհի հայրերու ճեղքով:

Կիր. 9 Մարտ.- Բուն Բարեկենդան: Փակեալ - Խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Տ. Բարսեղ Վրդ. Դալէմտէրեան, իսկ Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան ֆարօգեց: Ըստ սովորութեան, զպրապետի պաշտօնը վարեց Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Դշ. 12 Մարտ.- Սկիզբն Կարգաց Մեծի Պահոց: Առաւօտուն Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Արեւագալ» ի առաջին, իսկ կէսօրէ ետք՝ «Խաղաղական» ի առաջին ժամերգութիւնը:

Եշ. 13 Մարտ.- Մեծ Պահոց առաջին հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ ֆարօգեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 14 Մարտ.- Ս. Թէոդորոսի նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 15 Մարտ.- Ս. Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր զլիսաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն եւ հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Կիր. 16 Մարտ.- Քառասներորդաց: Արտաքսման: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հարդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Հոն մատուցուեցաւ նաեւ Ս. Պատարագ:

ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպեքեան:

Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս քափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԵՂ. 5 Դեկտ. 1996.- Երուսաղէմի եւ Յորդանանի Ասորի ուղղափառ եկեղեցւոյ պատրիարքական փոխանորդ՝ Գերշ. Մար Սվերիոս Մալքի Մուրատի հրաւերով, Ջիքենեաց լեռան պանդոկներէն մէկուն մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 8 Դեկտ.- Երուսաղէմի մէջ, Մարոնիք եկեղեցւոյ Պատրիարքական փոխանորդ՝ Գերշ. Տ. Փոյ Սայայի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Մարոնիք վանքին մէջ ներկայ գտնուեցաւ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

ԲՂ. 9 Դեկտ.- Երուսաղէմի Բաղաբապետի եւ Տիկ. Օլմերքի կողմէ կազմակերպուած մոմավառութեան ընդունելութեան Խանուկայի հիմնադրոյ գիշերուան առթիւ, Բաղաբապետարանի սրահին մէջ, ներկայ գտնուեցան Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

ԲՂ. 9 Դեկտ.- Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Սահակ Արդ. Մաշայեանի, մեկնեցաւ Հոռմ, մասնակցելու համար Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի կողմէ տրուելիք այցելութեան, Հոռմէական եկեղեցւոյ Սրբազան Պապին, Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ.ին, Դեկտեմբեր 10-14 օրերուն, Վատիկանի մէջ: Պատրիարք Սրբազան եւ Հայր Սահակ Ս. Արքոպետարանի Դեկտեմբեր 16, Երկուշաբթի երեկոյեան:

ԴՂ. 25 Դեկտ.- Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի, Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսըր Արաֆաթին այցելութիւն մը տուաւ Բեքդեմէի մէջ, տօնական օրերու բարի մաղթանքներուն հետ անդրադառնալով հայ ժողովուրդի պատմութեան, եւ ներկայ կացութեան մէջ ժողովուրդներու գոյակցութեան:

ԵՂ. 26 Դեկտ.- Պատրիարք Սրբազան, ընկերակցութեամբ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի եւ Տ. Յուսիկ Եպս. Պաղեստինեանի մասնակցեցաւ Իսրայէլի նախագահ Էզեր Ուալմանի կողմէ կրօնական պետերուն ի պատիւ, նոր տարուան

առիթով կազմակերպուած հիւրասիրութեան:

Ուր. 27 Դեկտ.- Առաւօտուն, Միաբանութիւնը Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ այցելեց Յրանչիսկեանց Միաբանութեան Հայր Կիւսթոտին, եւ Լատինաց Ամենապատիւ Պատրիարք Միշէլ Սապպահին, շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, գացին Պապական նուիրակին եւ Անկլիկան Եպս.ին շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

- Նոյն օրը Միաբանութեան հոգեւորական հայրեր Տ. Յուսիկ Եպս. Պաղեստինեանի գլխաւորութեամբ այցելեցին Յոյն կաթօլիկ Պատրիարքարան, եւ Մարոնիքներու Եպս.ին, շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

Եր. 28 Դեկտ.- Առաւօտուն լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի գլխաւորութեամբ, մի քանի Միաբան Հայրեր գացին լուսնակաճերու Եպս.ին շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

ԳՂ. 7 Յուն. 1997.- Պատրիարք Սրբազան Հայրը Պաղեստինի Նախագահ Եսսըր Արաֆաթին կողմէ կազմակերպուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցաւ Բեքդեմէ մաղաթին մէջ, Քրիստոնեայ պետերուն հետ: Պատրիարք Սրբազան Հօր ընկերացան Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Աւագ Թարգման Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

ԴՂ. 8 Յուն.- Առաւօտուն լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր, գացին Ասորիներուն, Հալէշներուն եւ Դպտիներուն շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

- Պաղեստինեան իշխանութեան Զրօսաշրջիկութեան բարձրագոյն խորհուրդի կողմէ ի պատիւ Երուսաղէմի ճամբորդական ընկերութիւններու կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

ԵՂ. 9 Յուն.- Առաւօտուն Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր այցելեցին Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Պատրիարքին, շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

ԳՂ. 14 Յուն.- Իսրայէլի վարչապետ՝ Բենիամին Նաբահիաիւի կողմէ ի պատիւ լեհաստանի վարչապետ՝ Վոյցիմիրեց Սիմոնցիկի տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոհանեան:

ԲՂ. 20 Յուն.- Հայոց Ս. Ծնունդեան Տօնին առթիւ շնորհաւորութեան համար Պատրիարքարան այցելեցին Փրանչիսկեան Միաբանութիւնը, Լատինաց Ամեն. Պատրիարքը, Դպտոց, Ասորոց

և Հապէշաց Եպիսկոպոսները իրենց միաբանութիւնով, Անկլիկան Եպս.ի փոխանորդը, Յոյն կաթողիկէ և Մարոնիք Եպիսկոպոսները և Լատինականները:

Գշ. 21 Յուն.- Ս. Ծննդեան շնորհաւորութիւնները շարունակուեցան:

- Կրօնից նախկին նախարարը Բրօֆ. Շիրքիք. Յունաց Ամեն. Ս. Պատրիարքը իր Միաբանութեամբ և Երուսաղէմ տարբեր երկիրներէ եկած 12 Օրբոստոֆս Եպիսկոպոսներով և ներկայացուցիչներով: Ավգաֆի նախարար Հասան Թահպուպ. Երուսաղէմի քաղաքացիներ Եհուտ Օլմէրք և իր քարտուղարը Պրն. Կոլտսքին: Կրօնից նախարարութեան ներկայացուցիչները:

Եշ. 6 Փետր - Երուսաղէմի Քաղաքացիներ Եհուտ Օլմէրքի կողմէ տրուած ընդունելութեան ի պատիւ Պերլինի Քաղաքացիներ Պրն. Էպերհարտ Տիպկենի, ներկայ գտնուեցաւ Տ. Գաւիթ Արք. Սահակեան:

Կիր. 2 Մարտ.- Երուսաղէմի քաղաքացիներ Եհուտ Օլմէրքի և Քաղաքացիներարանի խորհուրդին կողմէ կազմակերպուած ընդունելութեան, ի պատիւ Իսրայէլի նախկին հանգուցեալ վարչապետ Իցհաֆ Ռապիին Յուշարձանի քաջման արարողութեան, ներկայ գտնուեցան Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան և Տ. Շնորհիք Ծ. Վրդ. Գալուստեան:

Գշ. 11 Մարտ.- Անկլիկան Եկեղեցւոյ Քէնթրալըրիի Արքեպիսկոպոս Ճօրն Քէրիի և Առաջնորդներու համագումարը տեղի ունեցաւ Երուսաղէմի Անկլիկան Մայր Տաճարի, Սէյնթ Ճօրնի մէջ: Երուսաղէմի Անկլիկան Եպս. Գերշ. Սէմիր Քաֆիքիի և իր փոխանորդ Գերշ. Սիա Ապու Էլ Ասալի հրաւերով կազմակերպուած պաշտամունքին և հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան, Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան և Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

1) Ռամազանի տօնին առիթով՝

- Յորդանանի Վսեմ. Հիւսէյն Թագաւորին.
- Պաղեստինի իշխանութեան Նախագահ Վսեմ. Եսսըր Արաֆաթին.

2) Նախագահական ընտրութեան առիթով.-

- Միացեալ Նահանգաց Ամերիկայի ընտրեալ նախագահ Ուիլիլմ Քլինթընին.

3) Իսրայէլի վարչապետ Իենիամին Նաթանեաիուն, Զինուորական երկու ինֆնաթիւններու ընդհարումէն 73 աղէտեալներուն առիթով ընտանիքներուն ցաւակցական.